ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- -- 2025 թվականի №----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №523-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 523-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) ԷԲՑ կանոնների 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին, 20.1-ին, 20.2-րդ, 25.1-ին և 32.1-ին ենթակետերով.

      «14.1) ԿԷԱ կայան՝ ԷՄՇ կանոնների համաձայն սակագնային կարգավորման ենթակա Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի, ՎԷԱ կայանի, ՀԷԱ կայանի և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի.».

      «20.1) ՀԷԱ կայան՝ հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող Արտադրող.».

«20.2) Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրող (ՀԾՄ)՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի հիման վրա հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրող.».

«25.1) ՊԷԱ կայան՝ պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում գործող Արտադրող, բացառությամբ ՀԷԱ կայանի.».

«32.1) ՎԷԱ կայան՝ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված էլեկտրական էներգիայի գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ Արտադրող, բացառությամբ ՊԷԱ կայանի.».

2) ԷԲՑ կանոնների 2-րդ կետի 27.1-ին ենթակետի «դ» պարբերությունում «բացառությամբ» բառից հետո լրացնել «ԿԷԱ կայանի, ՀԷԱ կայանի և ՀԾՄ-ի, ինչպես նաև» բառերը.

3) ԷԲՑ կանոնների 186-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«186.Հայտատուի կողմից ԷԲՑ կանոնների 184-րդ կետում նշված ամբողջական տեղեկությունը (փաստաթղթերը) ներկայացնելուց հետո Բաշխողը մինչև 150 կՎտ հզորությամբ կայանների դեպքում Տեղեկանքը տրամադրում է 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ 150 կՎտ և ավելի հզորությամբ կայանների դեպքում այն ներկայացնում է Համակարգի օպերատորի համաձայնեցմանը, որի պարագայում նշված ժամկետը երկարաձգվում է ևս 10 աշխատանքային օրով:».

4) ԷԲՑ կանոնները լրացնել հետևյալ բովանդակությամբ 186.1-ին կետով.

«186.1. Համակարգի օպերատորը դիմումը Բաշխողից ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Բաշխողին է ներկայացնում Տեղեկանքի համաձայնեցված տարբերակը, իսկ էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը և անվտանգությունը վտանգվելու դեպքում՝ համապատասխան հիմնավորումներով բացասական դիրքորոշումը:».

5) ԷԲՑ կանոնների 187-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«187. Տեղեկանքի տրամադրելու վերաբերյալ 184-րդ կետում նշված դիմումը մերժվում է, եթե՝

1) նույն կետում նշված դիմումը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Հայտատուն չի ներկայացրել 184-րդ կետով նշված ամբողջական տեղեկությունը (փաստաթղթերը),

2) ԷԲՑ կանոնների 186.1-ին կետի համաձայն Համակարգի օպերատորը ներկայացրել է բացասական դիրքորոշում՝ ԷԲՑ կանոնների 184-րդ կետում նշված դիմումը ստանալու պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
----------2025թ.